Հավելված N1

ՀՀ ֆինանսների նախարարի 2017 թվականի

մայիսի 30-ի N 265-Ա հրամանի

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

հրավերի պարզաբանման մասին

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի
2018 թվականի նոյեմբերի 28-ի թիվ 2 որոշմամբ և հրապարակվում է
"Գնումների մասին" ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը <<ԷԱՃԱՊՁԲ-2019/16-8-ԵՊԲՀ>>

<<Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան>> հիմնադրամի կարիքների համար բժշկական նշանակության ապրանքների՝ գործիքների և պարագաների ձեռքբերման նպատակով

կազմակերպված <<ԷԱՃԱՊՁԲ-2019/16-8-ԵՊԲՀ>> ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը

ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերի վերաբերյալ 26.11.2018թ. ստացված հարցադրումները և դրանց վերաբերյալ 28.11.2018թ. տրամադրված պարզաբանումները՝

Հարցադրում N 1

Չափաբաժին 27: Տեսատպիչի թուղթ 110մմx20մ: Տեխնիկական պահանջում գրված է՝ <<Թուղթը պետք է համատեղելի լինի SONY UPP-110S տպիչի հետ>>: Սակայն SONY UPP-110S-ը հանդիսանում է ջերային թղթի մոդելը, ոչ թե տպիչի:

Պարզաբանում N 1

Ի պատասխան Ձեր 27-րդ չափաբաժնի մասով հարցման հայտնում ենք Ձեզ, որ հրավերով պահանջվող տեսատպիչի թուղթը նախատեսված է՝ Sony UP-897MD, Sony UP-D898MD և Mitsubishi P93 տեսատպիչների համար: Պահանջվող թուղթը կիրառելի է բոլոր թվարկված տպիչներում: Հիմք է ընդունվելու թղթի թվարկված տպիչների հետ համատեղելիության պայմանը, անկախ Ձեր հարցման մեջ նշված մոդելի առկայությունից:

Հարցադրում N 2

Տեսատպիչի թուղթ 110մմx20մ: Տեխնիկական պահանջում գրված է՝ <<Թուղթը պետք է համատեղելի լինի SONY UPP-110S տպիչի հետ>>: Սակայն SONY UPP-84HG -ը հանդիսանում է ջերային թղթի մոդելը, ոչ թե տպիչի:

Պարզաբանում N 2

Ի պատասխան Ձեր հարցման 28-րդ չափաբաժնի մասով հայտնում ենք Ձեզ, որ հրավերով պահանջվող տեսատպիչի թուղթը նախատեսված է Sony UP-D711MD տեսատպիչի համար: Պահանջվող թուղթը կիրառելի է նշված տեսատպիչի համար: Հիմք է ընդունվելու թղթի նշված տեսատպիչի հետ համատեղելիության պայմանը, անկախ Ձեր հարցման մեջ նշված մոդելի առկայությունից:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել <<ԷԱՃԱՊՁԲ-2019/16-8-ԵՊԲՀ>> ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար Ա.Հարությունյանին:

Հեռախոս 060-621-430

Էլ. փոստ procurement3.ysmu@gmail.com

<<ԷԱՃԱՊՁԲ-2019/16-8-ԵՊԲՀ>> ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Ա.Հակոբյան

Անդամներ՝ _____ Հ.Սարգսյան

_____ Մ.Գրիգորյան

Քարտուղար՝ _____ Ա.Հարությունյան